ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունց

- **ԵՐԿԻՐ/ՔԱՂԱՔ/ԺԱՄԿԵՏ**

Կիև (Ուկրաինա)

2018 թ. հուլիսի 10-11-ը

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցելու «Հասարակական արժեքների տեսանելիությունն ու ներգործությունը արվեստի տեսանկյունից» խորագիրը կրող հանրային քննարկմանը և նույն թեմայով ցուցահանդեսի բացմանը:

Friedrich-Ebert-Stiftung «Արևելաեվրոպական երկխոսություն» տարածաշրջանային գրասենյակի ղեկավար Նիկոլաս Գավալակասի հրավերով 2018 թ. հուլիսի 10-11-ը մեկնեցի Ուկրաինա՝ որպես նախարարության պաշտոնական ներկայացուցիչ՝ ներկա գտնվելու հուլիսի 10-ին Կիևի Տարաս Շևչենկոյի ազգային թանգարանում կայացած «Հասարակական արժեքների տեսանելիությունն ու ներգործությունը արվեստի տեսանկյունից» խորագիրը կրող հանրային քննարկմանը և դրան հաջորդող նույն թեմայով ցուցահանդեսի բացման պաշտոնական արարողությանը:

Միջոցառմանը ներկա էր Ուկրաինայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ա. Մանուկյանը: Կայացած առանձնազրույցի ընթացքում քննարկեցինք հայկական մշակույթի հանրահռչակման հարցերը, երկկողմ մշակութային ծրագրերի իրականացման հնարավորությունները:

Այնուհետև մասնակցեցի քննարկումներին, որին ներկա էին արվեստագետներ՝ Ռամին Մազուրը և Կարոլինա Դուտկան՝ Մոլդովայից, Նարեկ Ալեքսանյանը՝ Հայաստանից, Դինա Օգարկովան և Գեորգ Գոգուան՝ Վրաստանից, Օլգա Ալեժկան՝ Բելառուսից, Էմին Զյատդինովը՝ Ուկրաինայից, Ալեքսանդր Սայենկոն՝ Բելառուսից: Հայաստանի ներկայացուցիչ Նարեկ Ալեքսանյանը ներկայացրեց «Թավշյա հեղափոխություն» խորագրով աշխատանքը: Մասնակիցների կողմից կարևորվեց Արևելյան գործընկերության երկրներում բնակություն հաստատած արվեստագետների ազատ ստեղծագործելու իրավունքի գործնականում կիրառումը:

Ելույթիս խոսքում շնորհակալություն հայտնեցի կազմակերպիչներին հրավերի համար, այնուհետև ներկայացրի Հայաստանում վերջին շրջանում կատարված իրադարձությունները:

Շեշտեցի, որ կարևորագույն խնդիրներից է՝ Հայաստանում արվեստագետների գործունեության համար բարենպաստ և հավասար պայմանների ապահովումը, մշակութային քաղաքականության հստակեցումը, մշակույթի ոլորտի առաջնային նշանակություն ունեցող խնդիրների լուծումը:

Անդրադարձ կատարեցի նաև մշակութային ստեղծարար արդյունաբերությանը: Նշեցի, որ գործընթացը հնարավոր է իրականացնել միայն վարելով միասնական քաղաքականություն՝ պետական և մասնավոր հատվածում գործող կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Մասնակիցների կողմից բարձրաձայնվեցին նաև այլ խնդիրներ, մասնավորապես՝ Արևելյան գործընկերության երկրներում բնակվող արվեստագետների ազատ ստեղծագործելու իրավունքի պրակտիկ կիրարկումը, կոնֆլիկտային տարածաշրջաններում խտրականության պայմաններում երկխոսության և համերաշխության մթնոլորտի ձևավորմանը նպաստող հիմքերի ստեղծումը, ինչպես նաև շուկայական տնտեսության պայմաններում արվեստի առարկաների զանգվածային սպառմանը նպաստող հարթակների ձևավորումը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ/ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- ***2018 թ. հուլիսի 10-ին Կիևի Տարաս Շևչենկոյի ազգային թանգարանում կայացած ցուցահանդեսին ներկայացվեց Հայաստանի ներկայացուցիչ, ՀԵՏՔ թերթի ֆոտոլրագրող Նարեկ Ալեքսանյանի ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ աշխատանքը:***
- ***Ուկրաինայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ա. Մանուկյանի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց հայաստանյան թանգարաններից մեկին ուկրաինացի ժամանակակից նկարիչների կտավները փոխանցելու ուղղությամբ:***

ՀՀ մշակույթի նախարար՝

Լ. ՄԱԿՈՒՆՑ